ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-23/57

ք. Երևան «12» 06 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հ. Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Եսայանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Հննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 161130 (մեկ հարյուր վաթսունմեկ հազար մեկ հարյուր երեսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[17.1]:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Մայ Մարկետ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2,	ք. Երևան, Կոմիտասի 36, բն,14
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011022630	Հ/Հ 1570048536910100
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00184008
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Հ. Հակոբյան	---------- Ս. Եսայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«12» 06 2023թ կնքված
ՀՀԿԳՄՆՆՄԱՊՁԲ-23/57 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի									Մատակարարման*	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով Նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ֆիրմային անվանումը	տեխնիկական բնութագիրը**	չափման միավորը	քանակը	միավոր գինը, ՀՀ դրամ	ընդհանուր գինը, ՀՀ դրամ	հասցեն	ժամկետը
1	22811150/1	նոթատետրեր	Libra	Կազմը՝ թուղթ (80 գ/մ²) տողանի, էջերի քանակը՝ ոչ պակաս 50	հատ	20	200	4000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
2	22811180/1	օրագրեր	Attache	օրատետր A5, կազմված արհեստական կաշվե կազմից (շագանակագույն, NU5)	հատ	3	2500	7500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

3	30192100/1	ռետին հասարակ	Attache	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար	հատ	40	35	1400	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
4	30192111/1	թանաքի բարձիկներ	Horse	Թանաքի բարձիկ՝ կապույտ գույնի	հատ	4	500	2000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում
5	30192114/1	թանաք, կնիքի բարձիկի համար	Horde	Թանաք կապույտ (Trodat 4913, 2*5.5)	հատ	2	300	600	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

6	30192121/1	գրիչ գնդիկավոր	Claro	Գնդիկավոր, թանաքի գույնը կապույտ տարբեր տեսակի կառուցվածքով, 0,4:0.5 մմ ծայրով	հատ	30	100	3000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
7	30192128/1	գրիչ գելային	Burro	Գրիչ, 0,5 մմ ծայրով,կապույտ (գել)	հատ	10	200	2000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
8	30192130/1	մատիտներ	Attache	Մատիտ հասարակ, ռետինով սև կարծրությունը HB 0"5	հատ	15	30	450	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

9	30192133/1	սրիչներ	Attache	սրիչ սովորական, գրաֆիտե մատիտի համար (մետաղական)	հատ	10	50	500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
10	30192160/1	շտրիխներ	Silverof	բաղադրանյութ վրձինով, պլաստամսե տարայի մեջ, գրիչով	հատ	10	170	1700	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
11	30192220/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմ*36 մ գրասենյակային, փոքր	Bolex	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	հատ	10	100	1000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

12	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային	Silverof	չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար	հատ	15	250	3750	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
13	30192720/1	գծանշիչ	Burro	տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրով:	հատ	15	140	2100	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
14	30197111/1	կարիչի մետաղալարե կապեր, փոքր	Silverof	գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ	հատ	15	60	900	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

15	30197112/1	կարիչի մետաղալարե, կապեր միջին	Silverof	գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ	հատ	15	100	1500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
16	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Sahand	թափանցիկ պոլիմերային թաղանթ (ֆայլ), A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ	հատ	180	10	1800	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
17	30197232/1	թղթապանակ, արագակար թղթյա	Yason	արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ	4	70	280	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

18	30197234/1	թղթապանակ, կոշտ կազմով	Libra	թղթապանակ /ռեգիստր/ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար	հատ	10	600	6000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
19	30197322/1	կարիչ, 20-50 թերթի համար	Attache	Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	5	900	4500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
20	30197622/1	թուղթ, A4 ֆորմատի	Sveto Copy	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ	հատ	100	840	84000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

21	30199230/1	նամակի ծրար, A5 ձևաչափի	Libra	Ծրար նամակի, չթափանցող, եռանկյունաչափ փակվող, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, 162x229, գույնը՝ սպիտակ	հատ	200	40	8000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
22	30199232/1	նամակի ծրար, A4 ձևաչափի	Libra	Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից ըստ ԳՕՍ 9094-89, ինքնասոսնձվող	հատ	50	60	3000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
23	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	Attache	թուղթ նշումների համար սոսնձվածքով, կպչուն 9*9 սմ	հատ	15	100	1500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

24	39224342/1	աղբարկղ, մետաղյա	Sheng Zhong	Զամբյուղ թղթերի համար, կլոր. Մետաղական. Դիամետր -30 սմ. Բարձրություն -34.5 սմ.	հատ	4	1500	6000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
25	39241141/1	դանակ՝ գրասենյակային	Attache	Դանակ գրասենյակային, չափը 18 մմ x 120 մմ պատյանը պլաստիկ	հատ	1	300	300	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
26	39263100/1	գրասենյակային լրակազմ	Attache	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաների լրակազմ՝ պտտվող, 14 կտոր, 15 կտոր	հատ	2	3000	6000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

27	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	Scarlet	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	հատ	6	600	3600	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
28	39263510/1	սեղմակ, փոքր	Attache	Մետաղական, լայնությունը 25 մմ	հատ	50	20	1000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ
29	39263520/1	սեղմակ, միջին	Attache	Մետաղական, լայնությունը 32 մմ	հատ	50	25	1250	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

30	39292510/1	քանոն, պլաստիկ	Attache	Քանոն պլաստիկ 30սմ	հատ	10	150	1500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2	2023թ. մինչև հունիսի 30-ը ներառյալ

Չափաբաժինների համար ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված:
Ապրանքների տեղափոխումը և բեռնաթափումը իրականացվում է Կատարողի կողմից՝ ամբողջությամբ:

ԳՆՈՐԴ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան
3 Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011022630
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մայ Մարկետ» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտասի 36, բն,14
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570048536910100
ՀՎՀՀ 00184008

Տնօրեն՝
_____ Մ. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 12 » 06 2023թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-23/57 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	22811150/1	նոթատետրեր	-	-	-	-	-	1400	2400	2400	2400	4000	4000	4000	4000	
2	22811180/1	օրագրեր	-	-	-	-	-	2625	4500	4500	4500	7500	7500	7500	7500	
3	30192100/1	ռետին հասարակ	-	-	-	-	-	490	840	840	840	1400	1400	1400	1400	

4	30192111/1	թանաքի բարձիկներ	-	-	-	-	-	700	1200	1200	1200	2000	2000	2000	2000
5	30192114/1	թանաք, կնիքի բարձիկի համար	-	-	-	-	-	210	360	360	360	600	600	600	600
6	30192121/1	գրիչ գնդիկավոր	-	-	-	-	-	1050	1800	1800	1800	3000	3000	3000	3000
7	30192128/1	գրիչ գելային	-	-	-	-	-	700	1200	1200	1200	2000	2000	2000	2000
8	30192130/1	մատիտներ	-	-	-	-	-	157.5	270	270	270	450	450	450	450
9	30192133/1	սրիչներ	-	-	-	-	-	175	300	300	300	500	500	500	500
10	30192160/1	շտրիխներ	-	-	-	-	-	595	1020	1020	1020	1700	1700	1700	1700
11	30192220/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմ*36 մ գրասենյակային, փոքր	-	-	-	-	-	350	600	600	600	1000	1000	1000	1000

12	30192710/1	սոսնձամատիտ, գրասենյակային	-	-	-	-	-	1312.5	2250	2250	2250	3750	3750	3750	3750
13	30192720/1	գծանշիչ	-	-	-	-	-	735	1260	1260	1260	2100	2100	2100	2100
14	30197111/1	կարիչի մետաղալարե կապեր, փոքր	-	-	-	-	-	315	540	540	540	900	900	900	900
15	30197112/1	կարիչի մետաղալարե, կապեր միջին	-	-	-	-	-	525	900	900	900	1500	1500	1500	1500
16	30197231/1	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	-	-	-	-	-	630	1080	1080	1080	1800	1800	1800	1800
17	30197232/1	թղթապանակ, արագակար թղթյա	-	-	-	-	-	98	168	168	168	280	280	280	280
18	30197234/1	թղթապանակ, կոշտ կազմով	-	-	-	-	-	2100	3600	3600	3600	6000	6000	6000	6000
19	30197322/1	կարիչ, 20-50 թերթի համար	-	-	-	-	-	1575	2700	2700	2700	4500	4500	4500	4500

20	30197622/1	թուղթ, A4 ֆորմատի	-	-	-	-	-	29400	50400	50400	50400	84000	84000	84000	84000
21	30199230/1	նամակի ծրար, A5 ձևաչափի	-	-	-	-	-	2800	4800	4800	4800	8000	8000	8000	8000
22	30199232/1	նամակի ծրար, A4 ձևաչափի	-	-	-	-	-	1050	1800	1800	1800	3000	3000	3000	3000
23	30199420/1	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	-	-	-	-	-	525	900	900	900	1500	1500	1500	1500
24	39224342/1	աղբարկղ, մետաղյա	-	-	-	-	-	2100	3600	3600	3600	6000	6000	6000	6000
25	39241141/1	դանակ՝ գրասենյակային	-	-	-	-	-	105	180	180	180	300	300	300	300
26	39263100/1	գրասենյակային լրակազմ	-	-	-	-	-	2100	3600	3600	3600	6000	6000	6000	6000
27	39263200/1	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով	-	-	-	-	-	1260	2160	2160	2160	3600	3600	3600	3600

28	39263510/1	սեղմակ, փոքր	-	-	-	-	-	350	600	600	600	1000	1000	1000	1000
29	39263520/1	սեղմակ, միջին	-	-	-	-	-	437.5	750	750	750	1250	1250	1250	1250
30	39292510/1	քանոն, պլաստիկ	-	-	-	-	-	525	900	900	900	1500	1500	1500	1500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան
3 Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011022630
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝

---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Մայ Մարկետ» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտասի 36, բն,14
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570048536910100
ՀՎՀՀ 00184008

Տնօրեն՝

---------- Ս. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ.